Հաստատված է
<<ՀՀԿՄ ԲՄՀՈԱԿ-ՇՀ ԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
ընթացակարգի հանձնաժողովի
03 . մարտի 2014թ. –ի թիվ 1 որոշմամբ

# ԲՋՆԻԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

## ՀՐԱՎԵՐ

Բջնիի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված ՇՀ ընթացակարգի

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>>
ծածկագրով գնման ընթացակարգով
շրջանակային համաձայնագրեր
կնքած մասնակիցներին

Հարգելի՛ գործընկերներ,
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ11/2>> ծածկագրով շրջանակայինհամաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում
Կոտայքի Մարզի Բջնիի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու<<Գնումների աջակցման կենտրոն>>ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերի համաձայն. Կից ներկայացվող Թիվ <<ԿՄԲՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>>պայմանագրի նախագծի / ՀավելվածN3 / N1 հավելվածում նշված ապրանքները:
Ապրանքների մատակարարման պայմանները ներկայացված են կից ներկայացվող պայմանագրի նախագծում:
Հայտնումենք ,որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն Անհրաժեշտ է ներկայացնել Կոտայքի մարզ գ. Բջնի 8- րդ փողոց N2 հասցեով, Շ.Պապոյանին, մինչև 2014թվականի <u>մարտի 24-ը</u>, ժամը 11:00-ն:
Հայտերը կբացվեն Բջնիի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքում, Կոտայքի մարզ գ. Բջնի 8-րդ փողոց N2 հասցեում, 2014թվականի <u>մարտի 24-ին</u>, ժամը 11:00-ին:
Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը / ՀավելվածN1 / և գնային առաջարկը / ՀավելվածN2 /: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով, ընդ որում՝ հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ ըստ չափաբաժիններում նշված, յուրաքանչյուր գնման առարկայի միավորի համար, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով :
Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ, եթե հրամանով կատարված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է , որ մասնակիցը օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանատվության ապահովման և /կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնել այլ /լրացուցիչ/ փաստաթղթեր և / կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և / կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասի սահմանված կարգով պայմանագրի կնքումը:
Ընդ որում ՝

-նման փաստաթղթերի և կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգ սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդկետի պահանջները
-նման պահանջի դեպքում , մասնակիցներից պահանջվող փաստափղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի նոր ոկավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքված մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով / ծանուցումով /՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան /կոնկրետ/ դրույթի
Ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթթերը և /կամ տվյալները:
Կից ներկայացվում էկնքվելիք պայմանագրի նախագիծը և հայտով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը :

Հարգանքներով՝

Բջնի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն Ռ.Արովյան

*նախագիծ*

*"___"___________2014թ. կնքված*

*ՀՀ ԿՄԲԳ ԲՄ ՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ- 1-11/2 գնման պայմանագրի*

*ԲՋՆԻԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀ ԿՄԲԳ ԲՄՀՈԱԿ -ՇՀԱՊՁԲ-1*

գ.Բջնի "___"_______________ 2014թ.

___________________________-ը, ի դեմս տնօրեն _________________-ի որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Պատվիրատու», մի կողմից, և ____________________-ն, ի դեմս տնօրեն _________________-ի, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. *Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը*

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր), սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին մատակարարել (հավելված 2)՝ սույն Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի **սննդամթերք** (այսուհետև՝ Ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար ըստ հավելված 3 վճարման ժամանակացույցի:

*2.Մատակարարման պայմանները և վայրը*

1.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է հետևյալ պայմաններով՝

-Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը:

-Օրեկան պատվերը տրվում է նախորդ օրվա մինչև ժամը $15^{00}$-ն,իսկ շաբաթական պատվերը՝ նախորդ շաբաթվա մինչև 5-րդ աշխատանքային օրը: Ընդ որում, օրեկան պատվերի դեպքում մատակարարումն իրականացվում է մինչև տվյալ օրվա ժամը $10^{00}$-ն, շաբաթական մատակարարումը՝ մինչև տվյալ շաբաթվա առաջին աշխատանքային օրվա ժամը $10^{00}$-ն:

1.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 Հավելվածով սահմանված Գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից , բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամանակում:

2. *Կողմերի իրավունքները և պարտականությունները*

*3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝.*

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց

փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) Հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից,

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը,

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների փոխարինում սույն Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով:

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.7 Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն Պայմանագիրը:

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

*3.2 Պատվիրատուն պարտավոր է՝*

3.2.1 Կատարել սույն Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Սույն Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

*3.3 Վաճառողն իրավունք ունի՝*

3.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Պատվիրատուից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Պատվիրատուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Պատվիրատուից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է սույն Պայմանագիրը:

3.3.4.1 Պատվիրատուի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

*3.4 Վաճառողը պարտավոր է՝*

3.4.1 Պատվիրատուին հանձնել Ապրանքը՝ սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Պատվիրատուին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն Պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Պատվիրատուին հանձնել սույն Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Մատակարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Սույն Պայմանագրով նախատեսված դեպքում վճարել սույն Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պատվիրատուին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Սույն Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս վնասները:

## 3. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն Պայմանագրով Վաճառողի հանձնած Ապրանքի ընդհանուր գինը կազմում է ________________ (______________________________) ՀՀ դրամ՝ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N 2 հավելվածով: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն կողմերի համաձայնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի N 3 հավելվածով՝ նախատեսված վճարման ժամանակացույցով:

## 4. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանություն սահմանված պահանջներին:

## 5. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Պայմանագրով նշված ծավալներով և ժամկետներում:

6.1.1 Վաճառողն՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 4):

6.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.3 Ապրանքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն Պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

Պայմանագրի գնի 0.05 %-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի նկատմամբ:

7.3 Սույն Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.4 Սույն Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.05 %-ի չափով:

7.5 Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 %-ի չափով:

7.6 Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից :

9.2 Սույն Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր Պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

9.3 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.4 Սույն Պայմանագիրը կազմված է ___/_______/ էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Պայմանագրի NN 1-4 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.5 Սույն Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն Պայմանագրից ծագած

պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

*10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ» «ՎԱՃԱՌՈՂ»

______________________________

______________________________

______________________________

______________________________

(ստորագրությունը) (ստորագրությունը)

Կ.Տ Կ.Տ

Հավելված 1

___.___________2014թ. կնքված

<< ԿՄԲԳ ԲՄ ՀՈԱԿ -ՇՀԱՊՁԲ- 1- 11/2 գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկա է հանդիսանում Բջնիի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերումը:

| *Հ/Հ* | *Ապրանքների անվանումները* | *Չափի միավորը* | *Գնման առարկայի որակական և այլ բնութագրիչ հատկանիշները* |
|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* |
| | | | *Սննդամթերքի մատակարարում* |
| 1 | Հաց | կգ | Սպաք բարձր տեսակի ԳՈՍՏ 26574-85, փաթեթավորումը ԳՈՍՏ26574-85:Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010 Հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի |
| 2 | Միս տավարի | կգ | Միս տավարի թարմ կամ պաղեցրած, փափուկ միս առանձ ոսկորի. Թարմ կամ պաղեցրած տավարի միս՝ բեշկակյան փաստաթղթերով, I և II կատեգորիաների, զարգացած մկաններով, պահված 0-4 C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի, I պարարտության |
| 3 | Իրիս | կգ | Փաթեթավորված և առանց, ԳՕՍՏ 6477-88. Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» << օրենքի 9-րդ հոդվածի |
| 4 | Կարագ | կգ | Սերուցքային, 71.5-82.5% յուղայնությամբ, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0.7 գր., ածխաջուր 0.7 գր., 740 կկալ, 20-25 կգ գործարանային փաթեթներով, ԳՕՍՏ 37-91. Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» << օրենքի 9-րդ հոդվածի |
| 5 | Ձեթ | լիտր | Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված, փաթեթավորումը՝ 2լիցված մինչև 1 լիտր տարողություններում, ԳՕՍՏ 1129-93. Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» << օրենքի 9-րդ հոդվածի |

| | | | |
|---|---|---|---|
| 6 | Պանիր | կգ | Պանիր կովի կաթից, յուղի զանգվածային մասը 50%-ից ոչ պակաս, աղի զանգվածային մասը 3.5-4.5%: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 7 | Մակարոն, վերմիշել | կգ | Մակարոնեղեն անդրոժ խմորից, չափածրարված, ԳՕՍՏ 875-92 կամ համարժեք: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 8 | Ալյուր | կգ | բարձր տեսակի, ԳՕՍՏ 26574-85, փաթեթավորումը՝ ԳՕՍՏ 26574-85 Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 9 | Ձավար | կգ | Առաջին տեսակի, խոնավությունը 12.5 %-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0.3%-ից մինչև 0.7%, ԳՕՍՏ 3034-75: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 10 | Ոլոռ կոտրած | կգ | Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի, ԳՕՍՏ 16730-71 Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 11 | Ձեթ | կգ | Տարբեր մրգերից և հատապտուղների փաստեղացված բարձր տեսակների ապակե և մետաղյա տարաներով: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, ԳՕՍՏ 7009-88, ՀՍՏ 48-94 |
| 12 | Տոմատի մածուկ | կգ | Բարձր տեսակի ապակե և մետաղյա տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ, ապակե և մետաղյա տարաներով: ԳՕՍՏ 3343-89 կամ համարժեք Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 13 | Թեյ | կգ | Բայխաթեյ սև, տերևներով կամ հատիկավորված, պարկերով: ԳՕՍՏ 1937-90 կամ ԳՕՍՏ 1938-90 Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 14 | Շաքարավազ | կգ | Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99.75%-ից ոչ պակաս, խոնավության զանգվածային մասը՝ 0.14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0.0003%-ից ոչ ավել, ԳՕՍՏ 21-94 կամ համարժեք: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 15 | Բրինձ | կգ | Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%, ԳՕՍՏ 6293-90, փաթեթավորումը՝ ԳՕՍՏ 26791-89: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 16 | Հնդկաձավար | կգ | Ստացված ցորենի ցեխահան հատիկների եփմամբ կամ հետագա կոտրատմամբ ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 15 % աղբային խառնուկները 0.3 %-ից ոչ ավելի, ԳՕՍՏ 5784-60: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 17 | Ոսպ | կգ | Մաքուր, չոր՝ խոնավությունը 14%-ից ոչ ավելի, միջին չորությունը՝ 14.0-17.0% ոչ ավելի, ԳՕՍՏ 7066-77 Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 18 | Հավկիթ<br>/1-ին կարգի/ | հատ | 1-ին կարգի , ձու սեղանի կամ դիետիկ, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր, ՀՍՏ 182-99: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 19 | Մածուն | կգ | Մածուն 3.2 % յուղայնությամբ կամ սպիտակուցային 2.5 % յուղայնության , թթվայնությունը 110-140 օT, չափածրարված ապակյա տարաներում կամ առողջապահության մարմինների կողմից թույլատրված նյութերից . ՀՍՏ120-96 Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |

| | | | |
|---|---|---|---|
| 20 | Սիսեռ | կգ | Չորացրած,կեղևած, դեղին կամ կանաչ գույնի, ԳՕՍՏ6201-68 21122_75:Անվտանգությունն ըստ N2 -III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին.>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի |
| 21 | Թթվասեր | կգ | Ճարպ կովի կաթից, յուղայնությունը` 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը` 65-100 T Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 22 | Կաթնաշոռ | կգ | Կաթնաշոռ թթվայնությունը` 210-240 T, փաթեթավորված սպառողական տարաներով մինչև 1000 գ կշռաբաժիններով. Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 23 | Կերակրի աղ | կգ | Էքստրա տեսակի յոդացված, յոդի զանգվածային մասը` 50*10 մգ/կգ, ՀՍՏ 239-2005: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 24 | Թխվածքաբլիթ | կգ | Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված, խոնավությունը` 3%-ից մինչև 10%, շաքարի զանգվածային պարունակությունը` 20%-ից մինչև 27%, յուղայնությունը` 3%-ից մինչև 30%, ԳՕՍՏ 24901-89: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 25 | Վաֆլի | կգ | Միջուկով և առանց միջուկի չափածրարված և առանց, ԳՕՍՏ14031-68 կամ համարժեք Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 26 | Կակաո | կգ | Խոնավությունը` 6,0 %-ից ոչ ավելի, pH-ը 7.1-ից ոչ ավելի, դիսպերսությունը` 90.0 %-ից ոչ պակաս, փաթեթավորված թղթե տուփերում և մետաղյա կամ ապակյա բանկաներում, ինչպես նաև ոչ կշռաբաժանված, ԳՕՍՏ 108-76: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 27 | Խտացրած կաթ | կգ | Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը` 26.5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43.5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը` 28.5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը` 8 OT-ից ոչ ավելի, փաթեթավորումը` չափածրարված մինչև 400 գ մետաղական տարաներում, ԳՕՍՏ 2903-7: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 28 | Կարտոֆիլ | կգ | Վաղահաս , I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, նեղ մասի տրամագիծը 4 սմ-ից ոչ պակաս, տեսակային մաքրությունը` 90 %-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 26545-85, փաթեթավորումը` կտորի, ցանցի և պոլիմերային պարկերով, ԳՕՍՏ 26545-85 |
| 29 | Կարտոֆիլ | կգ | Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, նեղ մասի տրամագիծը 4 սմ-ից ոչ պակաս, տեսակային մաքրությունը` 90 %-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 26545-85, փաթեթավորումը` կտորի, ցանցի և պոլիմերային պարկերով, ԳՕՍՏ 26545-85 |
| 30 | Սոխ | կգ | Ընտիր տեսակի, թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, նեղ մասի տրամագիծը 3սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 27166-86: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 31 | Կաղամբ | կգ | Գլուխ կաղամբ, վաղահաս, միջահաս և ուշահաս, ընտիր տեսակների, ԳՕՍՏ 26768-85: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 32 | Կաղամբ | կգ | Գլուխ կաղամբ ուշահաս, ընտիր տեսակների ԳՕՍՏ 26768-85 Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 33 | Գազար | կգ | Սովորական տեսակի, ԳՕՍՏ 26767-85: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 34 | Ճակնդեղ | կգ | Ընտիր տեսակի, ԳՕՍՏ 26766-85: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |

| | | | |
|---|---|---|---|
| 35 | Կանաչի | կապ | Թարմ, ըստ սանիտարահամաճարակային նորմերի |
| 36 | Վարունգ | կգ | Թարմ, տեղական արտադրության |
| 37 | Լոլիկ | կգ | Թարմ, տեղական արտադրության |
| 38 | Չամիչ | կգ | Գործարանային մշակման ենթարկված 50C մինչև 200C ջերմաստիճանի պայմաններում,70% -ից ոչ ավելի խոնավացման վերին գոտին |
| 39 | Յուղ | կգ | բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0.7 գր, ածխաջուր 0.7 գր, 740 կկալ, 20-25 կգ գործարանային փաթեթներով, ԳՕՍՏ 37-91: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 40 | Նրբերշիկ | կգ | պատրաստված մեխանիկական եղանակով ձևափոխված հավի, կկալ՝ 82/340 ԿՋ, պրոտեին՝ 4.9 գր., յուղայնությունը՝ 6.0 գր., ածխաջրեր՝ 2.0 գր |
| 41 | Հավի բդիկ | կգ | Հավի մսեղեն սառեցրած, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, ԳՕՍՏ 25391-82. Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 42 | Հավի կրծքամիս | կգ | Հավի մսեղեն սառեցրած, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, ԳՕՍՏ 25391-82. Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 43 | Խնձոր | կգ | Խնձոր թարմ,պտղաբանական 1-ին խմբի Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5սմ-ից ոչ պակաս,ԳՕՍՏ 21122 75 Անվտանգությունն ըստ N2 -III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>>. Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի |
| 44 | Հացիկ/թխվածքաբլիթ/ | հատ | Թարմ վիճակում, հատով, փաթեթավորված կամ առանց փաթեթավորման Անվտանգությունն ըստ հիգիենիկ նորմատիվների |
| 45 | Բլղուր | կգ | Ստացված ցորենի հատիկներից, խոնավությունը 15 %-ից ոչ ավելի, փաթեթավորումը՝ տոպրակներով կամ պարկերով. Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 46 | Դափնետերև | կգ | Դափնու տերևներ՝ չորացրած, չափածրարված պոլիէթիլենային,թղթե կամ ստվարաթղթե տոպրակներում |
| 47 | Շոկոլադ | կգ | Թարմ, մրգային, տեղական արտադրության, խոնավությունը՝ 3,0 %-ից ոչ ավելի, թթվայնությունը՝ 3-26 Փաթեթավորված և առանց. ԳՕՍՏ 6477-88 Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 48 | Բանան | հատ | Բանան թարմ,պտղաբանական 1-ին խմբի :Անվտանգությունն ըստ N2 -III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի |

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»

Տնօրեն՝

______________

(ստորագրությունը)

Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»

Տնօրեն՝

______________

(ստորագրությունը)

Կ.Տ

Հավելված 3

. 201 4 թ. կնքված

ՀՀ ԿՄԲԳ ԲՄ ՀՈԱԿ -ՇՀԱՊՁԲ -1-11/2 գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի անվանումը | Ֆինանսավորման ժամկետը | | | | |
|---|---|---|---|---|---|
| Սննդամթերքի մատակարարում | Ֆինանսավորումը կատարվելու է 2014 թվականի պահպանման ծախսերի նախահաշվով նախատեսված գումարների սահմաններում 100% երկկողմ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա | | | | |
| | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Տարեկան |
| | 0,0 | 30,0 | 70,0 | 100,0 | 100,0 |

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»

Տնօրեն՝

_______________

(ստորագրությունը)

Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»

Տնօրեն՝

_______________

(ստորագրությունը)

Կ.Տ

Հավելված 2

" " ____________________ 201 թ. կնքված

N <<ՀՀԿՄ ԲՄՀՈԱԿ-ՇՀ ԱՊՁԲ-1- 11/2>> ծածկագրով

գնման պայմանագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չափի միավորը | Միավորի գինը, դրամ | Նախատեսվում է գնել 2014թվականի ընթացքում, ընդ որում | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Քանակը | Գումարը /դրամ/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1. | Հաց բ/տ | կգ | | - | 600 | 1350 | 1900 | 1900 | |
| 2. | Միս տավարի | կգ | | - | 30 | 69 | 90 | 99 | |
| 3. | Իրիս | կգ | | - | 10 | 30 | 40 | 40 | |
| 4. | Կարագ /սերուցքային/ | կգ | | - | 10 | 30 | 45 | 45 | |
| 5. | Ձեթ /արևածաղկի/ | կգ | | - | 10 | 30 | 45 | 45 | |
| 6. | Պանիր Լոռի | կգ | | - | 10 | 25 | 35 | 35 | |
| 7. | Վերմիշել | կգ | | - | 40 | 110 | 160 | 160 | |
| 8. | Ալյուր բ/տեսակի | կգ | | - | 10 | 30 | 50 | 50 | |
| 9. | Ձավար սպիտակ | կգ | | - | 10 | 30 | 50 | 50 | |
| 10. | Ոլոռ կոտրած | կգ | | - | 10 | 30 | 40 | 40 | |
| 11. | Ջեմ /տարբեր մրգերի/ | կգ | | - | 20 | 40 | 60 | 60 | |
| 12. | Տոմատ | կգ | | - | 10 | 30 | 40 | 40 | |
| 13. | Թեյ Բարխաթեյ | կգ | | - | 2 | 5 | 7 | 7 | |
| 14. | Շաքարավազ | կգ | | - | 50 | 120 | 170 | 170 | |
| 15. | Բրինձ | կգ | | - | 35 | 80 | 120 | 120 | |
| 16. | Հնդկաձավար | կգ | | - | 15 | 30 | 50 | 50 | |
| 17. | Ոսպ ռուսական | կգ | | - | 10 | 30 | 40 | 40 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18. | Հավկիթ | կգ | | - | 300 | 800 | 1100 | 1100 | |
| 19 | Մածուն | կգ | | - | 150 | 350 | 500 | 500 | |
| 20. | Միսեր | կգ | | - | 10 | 20 | 30 | 30 | |
| 21. | Թթվասեր | կգ | | - | 13.5 | 31,5 | 45 | 45 | |
| 22. | Կաթնաշոռ | կգ | | - | 3 | 6 | 9 | 9 | |
| 23 | Աղ կերակրի յոդացված | կգ | | - | 10 | 30 | 40 | 40 | |
| 24 | Թխվածքաբլիթ | կգ | | - | 15 | 30 | 50 | 50 | |
| 25 | Վաֆլի Գրանդ Քենդի | կգ | | - | 15 | 35 | 50 | 50 | |
| 26 | Կակաո Գրանդ Քենդի | կգ | | - | 1 | 3 | 4 | 4 | |
| 27 | Խտ. կաթ | կգ | | - | 32 | 68 | 100 | 100 | |
| 28 | Կարտոֆիլ/ապրիլի 1-ից սեպտեմբերի 1-ը/ | կգ | | - | 150 | 400 | 400 | 400 | |
| 29 | Կարտոֆիլ /սեպտեմբերի 1-ից դեկտեմբերի 30-ը/ | կգ | | - | - | 100 | 300 | 300 | |
| 30 | Սոխ /գլուխ/ | կգ | | - | 10 | 20 | 30 | 30 | |
| 31 | Կաղամբ թարմ /ապրիլի 1-ից սեպտեմբերի 1-ը/ | Կգ | | - | 40 | 80 | 80 | 80 | |
| 32 | Կաղամբ /սեպտեմբերի 1-ից դեկտեմբերի 30-ը/ | կգ | | - | - | 20 | 80 | 80 | |
| 33 | Գազար /թարմ/ | կգ | | - | 7 | 18 | 25 | 25 | |
| 34 | Բազուկ /թարմ/ | կգ | | - | 7 | 18 | 25 | 25 | |
| 35 | Կանաչի խառը /թարմ/ | կապ | | - | 13 | 38 | 60 | 60 | |
| 36 | Վարունգ | կգ | | - | 20 | 50 | 80 | 80 | |
| 37 | Լոլիկ | կգ | | - | 30 | 70 | 100 | 100 | |
| 38 | Չամիչ | կգ | | - | 6 | 8 | 10 | 10 | |
| 39 | Յուղ | կգ | | - | 30 | 70 | 100 | 100 | |
| 40 | Նրբերշիկ | կգ | | - | 20 | 40 | 60 | 60 | |
| 41 | Հավի բուդ | կգ | | - | 30 | 60 | 90 | 90 | |
| 42 | Հավի կրծքամիս | կգ | | - | 15 | 31 | 46 | 46 | |
| 43 | Խնձոր | կգ | | - | 20 | 40 | 60 | 60 | |
| 44 | Հացիկ/թխվածքաբլիթ/ | հատ | | - | 100 | 300 | 400 | 400 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 45 | Բլղուր | կգ | | - | 10 | 20 | 30 | 30 | |
| 46 | Դափնետերև | կգ | | - | 0,5 | 0,5 | 0,5 | 0,5 | |
| 47 | Ճոկոլադ | կգ | | - | 10 | 30 | 40 | 40 | |
| 48 | Բանան | կգ | | - | 10 | 30 | 40 | 40 | |

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»

էլ.հասցեն՝

Տնօրեն

_______________

Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»

էլ. հասցեն՝

Տնօրեն

_______________

Կ.Տ

Հավելված 4

« » 2014թ. կնքված

<<ԿՄԲՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-1-11/2>>գնման պայմանագրի

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ» «ՎԱՃԱՌՈՂ»

Էլ.հասցեն՝ Էլ. հասցեն՝

Տնօրեն Տնօրեն

______________ ______________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Պայմանագրի անվանումը
Պայմանագրի կնքման ամսաթիվը «_» « » 201 թ.
Պայմանագրի համարը
Պատվիրատուն, ի դեմ տնօրեն ______________ի և Վաճառողը ի դեմս տնօրեն ______________ի հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «______________» 201 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված ապրանքները (այսուհետև ապրանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «__» «_____» 2014թ–ից «__» «_________» 2014թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ մատակարարումները

| Մատակարարված ապրանքի համառոտ նկարագիրը | Մատակարարման քանակական ցուցանիշները | Մատակարարումների ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկե (ըստ ժամանա ցույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց Ապրանքն ընդունեց

______________ ______________

(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ Կ.Տ

Հավելված N2

N <<ԿՄ ԲՄ ՀՈԱԿ-ՇՀ ԱՊՁԲ- 1-11/2 >> *ծածկագրով*

*ընթացակարգի հրավերի*

N <<ԿՄ ԲՄ ՀՈԱԿ-ՇՀ ԱՊՁԲ-1- 11/2 >> *ծածկագրով*

*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված *<<ԿՄ ԲՄ ՀՈԱԿ-ՇՀ ԱՊՁԲ- 1-11/2 >> ծածկագրով ընթացակարգի հրավերը /ծանուցումը/, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի*

*նախագիծը*.

______________________________________________ -*ն*

/Ընթացակարգի մասնակցի անվանումը/անունը//

առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների

| Չ/հ | Գնման առարկայի անվանումը | Ինքնարժեքի հաշվարկ | | | Առաջարկված Գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ-ն | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | | | | | |
| *2* | | | | | |

Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սունյակում:

______________________________ ______________

/Մասնակցի անվանումը /անունը/,ղեկավարի պաշտոնը,Անուն Ազգանունը/ /ստորագրություն/

Կ.Տ

<<____>>______________2014թ.

Հավելված N1

N <<ԿՄ ԲՄ ՀՈԱԿ-ՇՀ ԱՊՁԲ-1-11/2 >> ծածկագրով

ընթացակարգի հրավերի

N <<ԿՄ ԲՄ ՀՈԱԿ-ՇՀ ԱՊՁԲ-1-11/2>> ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

ԴԻՄՈՒՄ

---------------------------------------------------------------ն հայտնում է ,որ ցանկություն

/Ընթացակարգի մասնակցի անվանումը/անունը//

ունի մասնակցելու Բջնիի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից <<ԿՄ ԲՄՄՀՈԱԿ-ՇՀ ԱՊՁԲ-1-11/2>> ծածկագրով հայտարարված ընթացակարգին և հրավերի /ծանուցման/ պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

____________________________________________ - ն հայտնում և հավաստում է,

/Ընթացակարգի մասնակցի անվանումը/անունը//

որ իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է , բացառությամբ՝

1. պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2. համատեղ գործունեության կարգով/ կոնսորցիումով/ մասնակցության դեպքերի:

____________________________________________ - ն հայտնում և հավաստում է,

/Ընթացակարգի մասնակցի անվանումը/անունը//

որ չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

____________________________________________-ի էլեկտրոնային փոստի

/Ընթացակարգի մասնակցի անվանումը/անունը//

հասցեն ՝ ______________________________ :

/Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն/

______________________________ ______________________

/Մասնակցի անվանումը/անունը/, ղեկավարի պաշտոնը,անունը,ազգանունը/ /ստորագրությունը/

Կ.Տ

<<___>>_______________2014թ.